ГОАР ГУКАСЯН

ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: *социальные сети, маркетинг, фейсбук, инстаграм, твиттер, вконтакте.*

Количество пользователей в социальных сетях растет экспоненциально с каждым днем. Они проводят часть своего дня на сайтах социальных сетей, читая новостные ленты, делясь интересным контентом и весело проводя время. Принимая во внимание участие людей в социальных сетях, компании вторгаются в социальные платформы, чтобы построить отношения со своими клиентами и создать хороший имидж своего бренда. Следуя мировому опыту, Армения пытается создать свою собственную реальность. В этой статье обсуждаются особенности SMM в Армении и способы их использования для достижения успеха в SMM.

GOHAR GHUKASYAN

FEATURES OF USING SOCIAL NETWORKS IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *social networks, marketing, facebook, instagram, twitter, vkontakte.*

The number of users in social networking increases exponentially day to day. They spend a part of their day in social media websites by reading news feeds, sharing interesting content and having fun. Taking into account people's engagement in social media sites, the companies invade the social platforms in order to build relationships with their customers and to create a good image of their brand. By following the worldwide experience, Armenia makes an attempt to create its own reality. In this article it's discussed the characteristics of SMM in Armenia and how to use them to obtain success in SMM.

ԱՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Տնտեսության պետական կարգավորում և միջազգային տնտեսական հարաբերություններ, բակալավրիատ, 3-րդ կուրս

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *Արարատի մարզ, տարածքային համահարթեցում, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, զբոսաշրջություն*

Հոդվածում ուսումնասիրվել է Արարատի մարզի տնտեսական զարգացման ներկա վիճակը, նպատակ է դրվել բացահայտելու դրա բարելավման հնարավորություններն ու առաջարկություններ մշակելու մարզի զարգացման ուղղությունների վերաբերյալ՝ ունենալու համար կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսությամբ, զբաղվածության բարձր մակարդակով, աղքատության ցածր մակարդակով ծայրահեղ աղքատությունն ամբողջությամբ հաղթահարած մարզ:

Յուրաքանչյուր երկրի առաջընթացի հիմքում տարածքային կայուն ու համաչափ զարգացման ապահովումն է: Կենտրոնախույս հետամնացությունը կամ մեգակենտրոնի համեմատությամբ երկրի մնացած տարածքների թույլ զարգացածությունը ձևավորում է սոցիալական դժգոհության լայն ալիք՝ կապված գործազրկության, ժողովրդագրական անհամամասնությունների խորացման, ներքին, իսկ այնուհետև արտաքին միգրացիայի (գաղթի) ակտիվացման, ծնելիության անկման և այլնի հետ, որը հասունանալով վերածվում է ազգային անվտանգության սպառնալիքի: Իսկ սոցիալական դժգոհության առկայությունն արդեն իսկ տնտեսական հետամնացության արտահայտիչն է: Հայաստանի Հանրապետությունը նույնպես կանգնած է տարածքային անհամաչափ զարգացման խնդրի առջև. դա է փաստում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության առաջին անգամ հրապարակած համախառն ներքին արդյունքի բացվածքը՝ ըստ Երևանի և մարզերի վիճակագրական տվյալները, որտեղ Երևանին է բաժին ընկնում ՀՆԱ 58.3%-ը, իսկ մարզերի շարքում առաջատարը Արարատի մարզն է [1] (տե՛ս հավելված 1):

Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է: Տարածքը կազմում է ընդհանուր տարածքի շուրջ 7%-ը (2096 քառ.կմ): 2017 թ. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով կազմել է 1,261,444 դրամ, որը հանրապետական միջինի 74%-ն է (տե՛ս հավելված 2):

Արարատի մարզը հանրապետության գյուղատնտեսական առաջատարներից է. այստեղ մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքը ՀՀ միջին ցուցանիշից ավելի է շուրջ 1.6 անգամ: Մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Մարզի ազգաբնակչության 71.5%-ը բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը, գյուղատնտեսական հողատեսքերի 87.6%-ը կազմում են մշակովի տարածքները, ընդ որում՝ մարզի մշակվող գյուղատնտեսական հողատարածքների աճը մշակելի տարածքներում կազմել է 9% (տե՛ս հավելված 3):

2017 թ. մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 124.2 մլրդ դրամ, որը հանրապետության գյուղատնտեսության արտադրանքի ծավալի 13.7%-ն է. դա նախորդ՝ 2016 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 10.7 մլրդ դրամով: 2017 թ., 2012-ի համեմատ, ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսության մասնաբաժինը հանրապետության գյուղատնտեսության մեջ նվազել է 1.2%-ով (տե՛ս հավելված 4,5): [2]

2017 թ. մարզում պտղի և հատապտղի բերքատու տարածությունը կազմել է 8015,0 հա, որը նախորդ տարվա համեմատությամբ պակաս է 58 հա-ով: Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները պակասել են շուրջ 2602 հա-ով, կարտոֆիլի ցանքատարածությունները՝ շուրջ 118 հա-ով, բանջարեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ շուրջ 1080 հա-ով, բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 411 հա-ով:

---

[1] Տե՛ս ՀՀ ԱՎԾ http://www.armstat.am/file/article/sv_12_17a_6200.pdf:

[2] http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a

Արձանագրվել է գյուղատնտեսական բոլոր մշակաբույսերի համախառն բերքի կրճատում (տե՛ս հավելված 6):

Մարզում 2017 թ. հունվար-դեկտեմբերին իրացվել է շուրջ 13.9 հազ. տոննա (կենդանի զանգվածով) միս (աճը՝ 2.2%), արտադրվել է 46.7 հազ. տոննա կաթ (աճը՝ 0.2%) և 62.5 մլն հատ ձու (-1.7%): 01.01.2018 թ. դրությամբ մարզում առկա են 1278 տրակտոր, 35 հացահատիկահավաք կոմբայն, 21 կերահավաք կոմբայն, ընդ որում՝ գյուղատնտեսական տեխնիկան հիմնականում մաշված է, հիմնախնդիր է այն նորով փոխարինումը և առկա հավաքակազմի արդիականացումը:

Ուսումնասիրության արդյունքում մարզի գյուղատնտեսության ոլորտում առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

1) բնական աղետները և համապատասխան ծառայությունների բացակայությունը, 2) ոռոգման ցանցի և պայմանների անբավարարությունը, 3) սերմացու, քիմիկատներ, պեստիցիդներ և դիզելային վառելիք գնելու անկարողությունը, 4) գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, 5) իրացման ցածր գները և տեղական շուկաների սահմանափակ ծավալները, 6) անասնաբուժական ծառայությունների անմատչելիությունը, 7) տեխնիկական տեղեկատվության և տեխնոլոգիաների անհասանելիությունը, 8) մթերման ենթակառուցվածքի ոչ բավարար լինելը:

Այն համալիր միջոցառումները, որոնք կխթանեն մարզում գյուղատնտեսության զարգացումը, հանգում են հետևյալին.

- Ոռոգման համակարգի իրական բարեփոխում: Մնալով իր հողի տերը՝ գյուղացին պետք է ոռոգման համակարգից ստանա իր փայաբաժինը, հենց նա պետք է սահմանի ոռոգման ջրի գինը:
- Մեծածախ և մանրածախ շուկաների հիմնում, որոնց փայատերերը պետք է լինեն միայն գյուղացիները: Պետք է վերանայել Երևանի, ինչպես նաև մի շարք այլ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից փողոցային ու բակային առևտուրը սահմանափակող որոշումները:
- Գյուղատնտեսության ոլորտը ապահովել որակյալ կադրերով. այդ տեսանկյունից հնարավոր արդյունավետ ուղի կարելի է համարել գյուղական ծագում ունեցող երիտասարդ մասնագետներին, գյուղ վերադառնալու ցանկության դեպքում, սուբսիդիաներ տրամադրելը (անհատույց անասունների որոշակի գլխաքանակ և թռչուններ՝ մի քանի տարվա ընթացքում դրանք բազմապատկելու պայմանով):

Մարզի գյուղատնտեսությունը սերտորեն կապված է արդյունաբերության հետ և վերջինիս համար հումքի մատակարար է: Մարզից արտահանվում է հիմնականում գյուղատնտեսական մթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ գինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղատնտեսական մթերք: Ե՛վ հանրապետությունում, և՛ հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մրգերը, բանջարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը: Մարզի արտահանման մեջ մեծ ծավալներ է կազմում բնական հանքաքարերի արտահանումը: 2017 թ. ցուցանիշներով մարզի արտահանումը կազմում է ՀՀ արտահանման 7.1%-ը:

Արարատի մարզը ՀՀ արդյունաբերապես զարգացած մարզերից է (3-րդն է Երևանից և Սյունիքից հետո): Երկրի արդյունաբերության ծավալի 12.4%-ը (2017 թ.) կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը՝ նախորդ տարվա 12.5%-ի փոխարեն (տե՛ս հավելված 9): Վերջին տարիներին՝ 2011–2017 թթ., այստեղ արդյունաբերական արտադրանքը կազմել է հանրապետության ցուցանիշի 8.1-12.4%-ը[1] (տե՛ս հավելված 6,7,8,9):

Արարատի մարզում արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալները վերջին տարիներին, հատկապես 2012 թվականից հետո, տարեցտարի աճի էական միտում են արձանագրել: 2017 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով), 2016 թ. համեմատությամբ, աճել է 26453 մլն դրամով՝ հասնելով 205 428.8 մլն դրամի (ընթացիկ գներով), իսկ 2011-2017 թթ. արդյունաբերական արտադրանքի ծավալները համադրելի գներով համեմատելիս արձանագրվել է աճ՝ 124.563.9 մլն դրամի չափով (տե՛ս հավելված 7): 2009-2016 թթ. աճ է գրանցվել մշակող արդյունաբերության (շուրջ 117128,8 մլն դրամ), էլեկտրաէներգիայի արտադրության (շուրջ 5194,9 մլն դրամ), ջրամատակարարման (շուրջ 355,6 մլն դրամ), ծխախոտի արտադրության (շուրջ 47728,1 մլն դրամ) ոլորոտներում, սակայն նվազում է ամրագրվել հանքագործական արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 48,7 մլն դրամ[2] (տե՛ս հավելված 10):

Չնայած արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին, այնուամենայնիվ, ոլորտում նկատելի կառուցվածքային տեղաշարժեր չեն արձանագրվել: Խնդրահարույց է, օրինակ, մշակող արդյունաբերության կառուցվածքը: Այսպես, մշակող արդյունաբերության շուրջ 33,1%-ը ապահովում է ծխախոտի արդյունաբերության ճյուղը, մինչդեռ մեքենաների և սարքավորումների արտադրությունը չի գերազանցում մշակող արդյունաբերության 0,03%-ը, ինչը խիստ բացասական երևույթ է:

Արդյունաբերության զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է, թերևս, արդյունաբերության ոլորտում ձեռնարկված միջոցառումները դեռևս բավարար չեն ոլորտի արդյունավետ կառուցվածք ունենալու համար, ուստի առաջարկվում է հետևյալ միջոցառումների շարքը՝

- ձկան կերերի արտադրության հիմնում, ինչը հնարավորություն կտա նվազեցնել ձկան ինքնարժեքը, ինչպես նաև ձկան վերամշակման (պահածոների արտադրություն, սառեցում, չորացում և այլն) արտադրության ստեղծում,
- Արարատի մարզում բնական քարերի արդյունահանման և վերամշակման ընկերությունների միության ստեղծում,
- բազմաթիվ խոտաբույսեր օգտագործվում են բուժական նշանակության և դիմահարդարման քսուքների արտադրության մեջ, ուստի այն

[1] http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__6%20Agriculture,%20forestry%20and%20fishing/AF-3-2017.px/table/tableViewLayout2/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a

[2] http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_3%20Industry,%20Construction,%20trade%20and%20services_32%20Industry/IC-in-2-2016.px/table/tableViewLayout2/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a

հիմք ընդունելով՝ հնարավոր կլինի զարկ տալ էկոլոգիապես մաքուր քսուքների արտադրությանը, ինչը բավական մեծ պահանջարկ ունեցող ապրանքատեսակ է համաշխարհային շուկայում,

- խթանել սունկ աճեցնելը, մեղվապահական տնտեսություններ հիմնելն ու զարգացնելը:

Համաձայն ՀՀ Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով (ՍԷԿՏ) ստացված տվյալների՝ 2017 թ. Հայաստան ընդհանուր այցելությունների թիվն ըստ քաղաքացիության կազմել է 398.143 (աճը նախորդ տարվա համեմատ (2.867.008) կազմել է 18.5%), որից զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1.494.779 կամ 2016 թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 18. 7%-ով:[1]

Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության գնահատման՝ յուրաքանչյուր տարի 300-330 մլն զբոսաշրջիկ այցելում է աշխարհի հիմնական կրոնական կենտրոններ:[2] Հայաստանում կրոնական զբոսաշրջության զարգացման համար կան զգալի ներուժ և նախադրյալներ, հարուստ պատմամշակութային ժառանգություն, այդ թվում՝ հուշարձաններ, որոնցից է Արարատի մարզում գտնվող Խոր Վիրապը: Արարատի մարզում են գտնվում նաև պատմական Հայաստանի երկու մայրաքաղաքներ Դվինը և Արտաշատը, Խոսրովի արգելոցը, Գևորգ Մարզպետունի վանք-ամրոցի համալիրը, Հովհաննես Կարապետ վանքը, Սուրբ Հովհաննես եկեղեցին: Անհրաժեշտ է զբոսաշրջիկներին հասանելի դարձնել պատմական Արտաշատ մայրաքաղաքի պեղումների արդյունքները, որոնց մի մասը գտնվում է Խոր Վիրապ համալիրի հետևի տարածքում: Խոր Վիրապի հարակից տարածքում իրականացնել պատմահնագիտական թանգարանի կառուցման ծրագիրը, որտեղ կզետեղվեն գտածոներ: Այդ տարածքը զբոսաշրջիկների համար առավել գրավիչ կդառնա Խոր Վիրապի հարակից տարածքում հուշանվերների վաճառքի տաղավարների, փոքրիկ սրճարանների և այլ առաջին անհրաժեշտության սպասարկման կետերի կառուցման համալիր ծրագրի իրականացման դեպքում:

Քանակական նկատելի հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է իրագործել հետևյալ միջոցառումների շարքը՝

1. Մարքեթինգային հիմնախնդիրների լուծման համար առաջարկվում է Արարատի մարզի առանձին զբոսաշրջավայրերի նկարագրերի ձևավորում, դրանց պատշաճ ներկայացում և տարածում թե՛ տպագրված գովազդատեղեկատվական նյութերի և թե՛ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով, ինչը հնարավորություն կտա բարձրացնել տեղեկացվածության և հետաքրքրվածության մակարդակը Արարատի մարզի զբոսաշրջային կենտրոնների նկատմամբ, որն էլ կապահովի զբոսաշրջիկների շարունակական հոսք տվյալ մարզ:

2. Հյուրընկալության ոլորտի բարելավման համար առավել հատկանշական է, որ մարզի տարածքով է անցնում Երևան–Գորիս զբոսաշրջային երթուղին, ուստի կարևորվում է Երևան-Երասխ ավտոմայրուղու Երասխի հատվածում, միջազգային բոլոր չափանիշներին համապատասխանող, գնային և

[1] https://asue.am/upload/files/science/banber/2017-year-3/9-B_2017.3-8.pdf
[2] https://www.e-draft.am/projects/229/about

որակական առումով առավել ներդաշնակ հանգստի գոտու ստեղծումը, որը հասանելի կլինի զբոսաշրջային բոլոր քարտեզներում:

Ներկա փուլում Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականությունը, որպես այդպիսին, դեռևս ամբողջովին ձևավորված չէ և առավելապես հատվածական բնույթ ունի: Սահմանված առանձին նպատակներն ու խնդիրները կամ առանձին ծրագրերն ու միջոցառումները դեռևս լիովին ընդգրկված չեն մեկ միասնական հայեցակարգային պատկերում:

Ուսումնասիրելով Արարատի մարզի տնտեսական զարգացման հիմնախնդիրները գյուղատնտեսության, արդյունաբերության և զբոսաշրջության ոլորտների շրջանակներում՝ եկանք այն եզրահանգման, որ գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը թեև զարգացած ճյուղեր են մարզում, այնուամենայնիվ, կան մի շարք խնդիրներ, որոնց շուրջ հոդվածում կատարվել են համապատասխան առաջարկություններ: Զբոսաշրջությունը դեռևս չի համապատասխանում ՀՀ զարգացման շարժընթացին, ուստի ամփոփելով՝ կարող ենք ասել, որ զբոսաշրջության զարգացման և մրցունակության ապահովման նպատակով առաջնահերթություններ պետք է համարվեն զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավումը, զբոսաշրջային ծառայությունների որակի, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների ընդհանուր վիճակի պահպանման մակարդակի բարձրացումը, ոլորտի աշխատուժի պատրաստման և վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, զբոսաշրջային մարքեթինգի արդյունավետության խթանումը և այլն: Մեծապես կարևորվում են յուրաքանչյուր մարզի տնտեսական զարգացման հիմնախնդիրներին ուղղվող միջոցառումները, քանի որ տարածքային զարգացման անհամաչափությունների հաղթահարումը, համաչափ զարգացումը դիտարկվում են որպես երկրի տարածքային զարգացման գերակայություն թե՛ միջնաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում:

Հավելված 1

2016 թ. ***ՀՆԱ կառուցվածքն ըստ ՀՀ մարզերի***



Հավելված 2

Արարատի մարզի ընդհանուր բնութագիրը

Տարածքը	*2 090 քառ. կմ*
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.0%
Համայնքներ, 2017 թ. տարեսկզբի դրությամբ	95
Քաղաքներ	4
Գյուղեր	95
Բնակչության թվաքանակը 2017 թ. տարեսկզբի դրությամբ	258.4 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	72.7 հազ. մարդ
գյուղական	185.7 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակը	8.7%
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	3.8%
Գյուղատնտեսական նշանակության հողեր	156 759.3 հա
այդ թվում՝ վարելահողեր	25 186.6 հա

Հավելված 3

Ընդհանուր մշակելի գյուղատնտեսական տարածքներ



Հավելված 4

Գյուղատնտեսության մասնաբաժինը հանրապետության գյուղատնտեսության մեջ, *2012-2017 թթ.(%)*

	2012	*2013*	*2014*	*2015*	*2016*	*2017*
Արարատի մարզ	14.9	14.8	14.4	14.6	15.4	13.7
ՀՀ	100	100	100	100	100	100

Հավելված 5

		2012	*2013*	*2014*	*2015*	*2016*	*2017*
Արարատի մարզ	Գյուղատնտեսության համա-խառն արտադրանքը, ընդամենը (ընթացիկ գներով, մլրդ դրամ)	125.3	136.2	141.4	137.6	134.9	124.2

Հավելված 6

Արարատի մարզի գյուղատնտեսական բոլոր մշակաբույսերի համախառն բերքի ցուցանիշների շարժընթացը *2016–2017 թթ.*

Ցուցանիշը	*2016 թ. հազ. տ*	*2017 թ. հազ. տ*	*2017 թ.՝2016 թ համեմատության + -*
Արտադրվել է հացահատիկ և հատիկաընդեղեն	34.3	17.8	-16.5
Կարտոֆիլ	30.3	21.7	-8.6
Բանջարեղեն	311.9	223.0	-88.9
Բոստանային մշակաբույսեր	78.4	57.4	-21
Պտուղ, հատապտուղ	74.7	15.4	-59.3
Խաղող	76.0	95.2	-19.2

Հավելված 7

ՀՀ ԱՎԾ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, *2017 թ.*



Հավելված 8

Արարատի մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը *2012–2017 թթ.*

	2012	*2013*	*2014*	*2015*	*2016*	*2017*
Արարատի մարզ	104,759.2	123,721.2	131,971.3	173,151.2	180,169.0	205 428.8

Հավելված 9

Արարատի մարզի արդյունաբերության մասնաբաժինը ՀՀ արդյունաբերության մեջ *(%)*

	2012	*2013*	*2014*	*2015*	*2016*	*2017*
ՀՀ	100	100	100	100	100	100
Արարատի մարզ	9.3	10.0	10.2	12.9	12.5	12.4

Հավելված 10

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում		*Մշակող արդյունաբերություն*		*Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում*		*Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում*	
2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016
861,9	714,3	159,744,4	166,676,8	11496,5	11,639	1048,4	1139,8

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)[1]

Ուժեղ կողմեր/հնարավորություններ	*Թույլ կողմեր/սպառնալիքներ*
Բնական պայմաններ, ժողովրդագրական իրավիճակ և քաղաքային զարգացում	
• Խիտ բնակեցվածությունը • Աշխատունակ բնակչության մեծ տեսակարար կշիռը • Արտագաղթին քիչ միտվածություն՝ մյուս մարզերի համեմատ • Սեյսմիկ ռիսկեր • Զարգացած գյուղատնտեսություն՝ ամենաբարձր բերքատվությունը հանրապետությունում • Մայրաքաղաքին մոտ գտնվելը • Շինանյութերի պատրաստման համար պիտանի մեծ հանքային պաշարներ • Գյուղատնտեսության համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ • Գյուղատնտեսության համար բերրի հողերի և բարենպաստ կլիմայական պայմանների առկայություն	• Սողանքային երևույթների առկայություն • Բազմաբնակարան շենքերի պահպանման ֆինանսավորման բացակայություն • Ինտենսիվ գյուղատնտեսության վարման տեխնոլոգիաների ներդրման ոչ բավարար մակարդակ • Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և արդյունավետ շահագործում (ներառյալ մաքրումը), չշահագործվող ինքնաթափ հորատանցքերի, շահագործման համար ոչ պիտանի, առանց ջրատվության ու առանց փականի հորատանցքերի լուծարում կամ կոնսերվացում • Կլիմայական ռիսկեր՝ կարկտահարություն, ցրտահարություն, սելավ
Ներքին արտադրանք և եկամուտներ	
• Գործող՝ ակտիվ արտադրական կազմակերպությունների մեծ թվաքանակ, որոնցից 17-ը՝ խոշոր հանրապետական նշանակության • Մարզային ՀՆԱ բարձր մակարդակ • Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի ծավալների բարձր մակարդակի շնորհիվ բարձր եկամուտների ապահովում • Մշակող արդյունաբերության արտադրանքի կտրուկ աճ, որի արդյունքում մարզի տնտեսության կառուցվածքի փոփոխություն • Մայրաքաղաքի շուկայի հասանելիություն • Գյուղատնտեսության մեջ մշակովի տարածքների ավելացման հնարավորություն • Գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հնարավորություն • Արտադրության բազմատեսակացման և վերամշակման մակարդակի բարձրացման հնարավորություն	• Գյուղատնտեսությունում զբաղվածների ցածր եկամուտներ՝ գյուղատնտեսական արտադրանքի բարձր ինքնարժեք և ոչ ամբողջական և արդյունավետ իրացում • Ծայրահեղ աղքատների բարձր մակարդակ • Ընտանեկան եկամուտների ցածր մակարդակ հանրապետական միջինից • Գյուղատնտեսության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման բացակայություն • Ոռոգման ներտնտեսային ցանցերի անբավարար վիճակ, ոռոգման ջրի մեծ կորուստների առկայություն, դրանց անհամապատասխանություն հողօգտագործման չափերին • Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության ցածր մակարդակ, առկա տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածություն, մեքենայացված աշխատանքների բարձր ինքնարժեք և համատեղ սկզբունքով տեխնիկայի օգտագործման կազմակերպական ձևերի կիրառման գրեթե բացակայություն

[1] http://www.mtad.am/files/docs/1772.pdf

Տարածաշրջանային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ

• Մարզում մեծ թվով շահագործվող հանքավայրերի առկայություն • Տարեցտարի հզորացող արդյունաբերություն՝ ակտիվ արդյունաբերական կազմակերպությունների մեծ թիվ • Արդյունաբերության առանձին ճյուղերում հանրապետական կարևոր նշանակություն ունեցող խոշոր գործարանների առկայություն մարզում • Արդիական, նորարարական մեթոդների կիրառման՝ ինտենսիվ գյուղատնտեսության զարգացման հնարավորություն • Նորագույն տեխնոլոգիաների կիրառման հասանելիություն • Ոռոգելի տարածքների ավելացման և գյուղատնտեսության զարգացման հնարավորություն՝ Վեդու ջրամբարի կառուցման միջոցով	• Մարզի տնտեսության կառուցվածքի ցածր բազմատեսակացման մակարդակ, գյուղատնտեսության գերակշռում • Գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածություն, մեքենայացման, արտադրողականության ցածր մակարդակ • Գյուղատնտեսության մեջ զբաղվածության անարդյունավետություն՝ շատ ցածր մակարդակ, որը հնարավորություն չի տալիս ներդրումներ կատարելու • Պաթոգենների ընդլայնում, որը բացասական ազդեցություն է ունենում գյուղատնտեսության զարգացման վրա • Անասունների և բույսերի հիվանդությունների ներթափանցման վտանգ

Այլ խնդիրներ (հատուկ զարգացման կարիք ունեցող տարածքներ)

Խոր Վիրապ վանական հուշահամալիրը ՀՀ Արարատի մարզում՝ որպես աշխարհում առաջինը քրիստոնեություն ընդունած պետության խորհրդանիշ	Ներմարզային զարգացման անհամաչափություններ Արտաշատի և Մասիսի տարածաշրջանի համայնքների և Արարատի տարածաշրջանի մի շարք համայնքների միջև

АНИ МАТЕВОСЯН

ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ АРАРАТСКОЙ ОБЛАСТИ

Ключевые слова: *Араратская область, территориальное выравнивание, промышленность, сельское хозяйство, туризм.*

В статье было изучено текущее состояние экономического развития Араратской области, была поставлена цель выявить возможности его совершенствования и разработать предложения по возможным направлениям развития области; иметь область, преодолевшую крайнюю бедность, со стабильной, соразмерно развивающейся, конкурентноспособной экономикой, с высоким уровнем занятости населения, с низким уровнем бедности.

ANI MATEVOSYAN

ECONOMIC PROBLEMS OF ARARAT REGION DEVELOPMENT

Key words: *Ararat region, regional leveling, industry, agriculture, tourism.*

In the article was presented the current fettle of the economic development of Ararat region aiming to reveal the potentiality of its improvement and elaborate recommendations about the possible ways of the development of the region about how to have stable, proportionately developing, competitive economy with a high rate of employment and a low rate of poverty making region one, who has overcome extreme poverty.